

ՈՒՍՈՒՄԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Քեզ պէս մի ջահել տղա կնիկ ուզելու ա գնում:

Գնում ա մի ջրի դրաղի տենում ա, որ ինձ նման մի բիձա մարթ հրես ոտները հանում ա, որ ջուրն անց կենա:

Ասում ա.— Բիձա, էդ ի՞նչ ես անում:

Ասում ա.— Տղա ջան, ոտներս հանում եմ, որ ջուրն անց կենամ:

Թե.— Դե որ տիե ա, ոտներդ հանիլ մի, յա դու մի կամունջ շինե՛՝ անց կենամ, յա ես մի կարմունջ շինեմ՝ անց կաց:

Թե.— Այ որթի, ես ո՞նց կարամ կարմունջ շինեմ:

Թե.— Դե արի շալակս իլ:

Բիձին շալկում ա, ջուրն անց կենում:

Գնում են հասնում Ուզունլարա դիրը, ասում ա.— Բիձա ջան, յա դու մի նարդիվան շինե հեշտ բցրանանք, յա՛ ես:

Ասում ա.— Այ որթի, ես ո՞նց շինեմ:

Էնա էդ տղեն նաղըլն ա վեր գձում, գրից անելով հենց էդ դիրը հեշտ բցրանում են, որ գլխի չեն ըլլում, վրեններուն թվում չի:

Գնում են քարի գլուխը, Ուզունլարա դզումը մի խակ արտ ա ըլլում, ասում ա.— Բիձա, էս արտի տերը արտը կերել ա՛, թե հլե նոր տի ընձիլ ու ուտիլ:

Ասում ա.— Այ որթի, արտը նոր ա հասնում, ո՞նց թե կերել ա:

Դա էլ բան չի ասում, բիձեն էլ գլխի չի ըլլում, գնում են: Մուրթն ընգնելիս ա ըլլում, հասնում են Ուզունլար:

Ասում ա.— Բիձա, ըրիգունը դոնախատուն չունիմ, դոնախ չե՞ս անիլ:

Ասում ա.— Դոնախն աստունն ա, բալա ջան, խի՞ չեմ անիլ:

Էդ տղեն գնում ա դրա տանը դոնախ ա ըլլում: Էդ բիձեն էլ մի հասած ախչիկ ա ունենում:

Դոնախօթախըմը տանում ա դոնախի հմար տեղ ա գձում, դրզում ընդի, ինքը տոլմա ա էփած ըլլում, թեփշըմն ա դնում մի չորս հատ, հոր հետ դրզում դոնախատուն: Հերը սոված ա ըլլում, տանլիս մինը կուլ ա գձում, մնում ա իրեքը: Որ տանում ա տղի ըղաքին ա դնում հա, ասում ա. — Բիձա, ձեր տարին տասնըմին ամիս ա :

Ասում ա.— Վա, խի՞ ա տասնըմին ամիս, մեր տարին տասներկու ամիս ա:

Ասում ա.— Չե, ձեր տարին տասնըմին ամիս ա:

Հերը վեր ա կենում, գալիս ա ախչկանն ասում.— Այ որթի, էս տղեն կասենաս շաշ ըլի, ինձ ասում ա. «Ձեր տարին տասնըմին ամիս ա»:

Ասում ա.— Այ հեր, վայ թե տոլմենու մինը կուլ ես գձել:

Ասում ա.— Հա:

Ասում ա.— Ընդուր ա ասել, թե՛ ձեր տարին տասնըմին ամիս ա:

Դոնախօթախիցն էն տղեն էս գրիցն իմանում ա:

Բիձեն ասում ա.— Այ որթի, մենակ էս ա՞ որ, ճամփըմն էլ սիե-սիե շաշ ու մաշ բաներ ասեր:

Ախչիկն ասում ա.— Հայրիկ ջան, դրանք շաշ բաներ չեն, էն կարմունջով ուզեցել ա ասե, թե մինս մինս անց կանցնենք, էրկուսըս էլ թաց չի ըլինք, պառավ մարթ ես, մեխկն էկել ա, անց ա կացրել: Էն նարդիվանով էլ ուզեցել ա ասե, թե մի գրից վեր գձենք, զրըցով ըլինք, էս դբում

բեզարենք ոչ սուս ու փուս գնալով: Էն արտով էլ ուզեցել ա ասէ, թե էս արտի տերը պարտքն ա արել— կերել, հմի արտը հնձել տի՝ կերածի տեղը տա՞լ, թե հլէ հնձիլ տի ինքը նոր ուտիլ: Բիձու բերանը բաց ա մնըմ, ասըմ ա.— Հաա ա:

Տղեն անգաճ ա դնըմ, տենըմ, որ խելոք ախշիկ ա ըրեվըմ:

Կանչըմ ա բիձուն, ասըմ ա.— Բիձա, ախշիկդ ուզըմ եմ, թե հվանըմ ա, թող գա իրար ուզենք:

Ասըմ ա.— Դուք գիդեք բալա ջան, թե իրար հավան ե՞ք՝ ուզեցեք:

Ախշիկը գալիս ա, ասըմ ա.— Ես էլ քեզ կուզեմ էն վախտը, որ կարենաս ոչխարն առանց մորթիլ, առանց քերթիլ մսիցն ինձ ուտացնես:

Ասըմ ա.— Հա, ես էդ կանեմ, թե դուն էլ կարենաս ոչխարի բուրթն առանց գգել, առանց մանել ինձ հմար մի խալիչա գործես:

Ախշիկն ասըմ ա.— Էդ էլ իմ բոյընին:

Տղեն գնըմ ա մի դոչ առնըմ, բերըմ խոտն ըղաքին դնըմ, պլորնին հանըմ, խրովըմ, տանըմ ախշկա ըղաքին դնըմ, ասըմ ա.— Էդ դոչը, որ հրետ սաղ ա ու խոտ ա ուտըմ, էդ էլ դրա միսը, դե կի:

Ախշիկն ասըմ ա.— Տարար, դե ինձ էլ իրեք օր մլուլ տուր:

Տալիս ա: Դա գնըմ ա էդ դոչին խուզըմ, թղքադըրնուն, առանց գգել ու մանել, հարիլ ա տալիս, թաղիք ա շինըմ, ներկերով հենց նախշեր ա անըմ վրին, որ դառնըմ ա մի սիրուն խալիչա, բերըմ ա տղին տալի:

Տղեն ասըմ ա.— Դուն էլ տարար:

Նոր դրանք իրար ուզըմ են, հրսանիք են ըլըմ, ընդուր որ հուսում են ունենըմ, իրար լեզու հըսկանըմ են:

Հմի ով հսկանա, նա էլ կտանի, տհենց ա ըշխարի բանը: